**Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Տաշիրի Արտակ Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար**

06.07.2021

Հայտատու՝ ՀՀ Լոռու մարզի « Տաշիրի Արտակ Աղեկյանի թիվ 2 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ

ՀՀ Կառավարության 11.02.2021թ. թիվ 161-Ն որոշում

Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Տաշիրի Արտակ Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը ցբաղեցնելու համար ՀՀ Լոռու մարզի

« Արտակ Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը: Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
1. դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը (բնօրինակի հետ),
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (որը հավակնորդը կարող է ներկայացվել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը) (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով), որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
5. ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի՝ առաջնորդվելով ՀՀ Կառավարության 11.02.2021թ. թիվ 161 – Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով: Փաստաթղթերն ընդունվում են 2021թ. սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,

կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, Տաշիրի Արտակ Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի Արտակ Աղեկյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցում:

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ ք.Տաշիր Դեմիրճյանի փողոց, շ. 8 Հեռ ՝ 0254-2-22-42

Էլ. փոստ՝ tashirdproctiv2@mail.ru